ժական պարծանաց յիշատակ են մեր նախնի կրօնաւոր և գրասէր սուրբ Հարց։

Ողջոյն Ձեզ, Վարժապետք և Ուսուցիչք, Ձեզ յանձնեալ է ազգային կրթութիւն և դաստիարակութիւն մանկանց ի պէս պէս ուսմունս և գիտութիւնս, որոյ նպատակն է միայն վարել և տանել զմարդիկ ի լաւագոյն կեանս, ոչ միայն ի բարեբաստիկ վիճակս աշխարհի, այլ և ի Վերին Քրիստոսի արքայութիւն։

Ողջոյն Ձեզ, Խմբագիրք Հայոց, որ ճգնիք անդադար յաշխատութիւնս և իբրեւ Հրապարակախօս մունետիկ, գրով և թղթով վարէք զժողովուրդն ի յառաջադիմութիւն և քաղաքակրթութիւն՝ բանալով զմիտս նոցա ընդունել զլաւն և խորշել ի վատէն։ Զգոյշ զգոյշ, ջանացէք միշտ ի շինել, զի այս է ձեր սեպուհ պարտիք։

Ողջոյն Ձեզ, յօրինիչ Մատենագիրք և Թարգմանիչք գրոց ի զանազան լեզուաց հեղինակութեանց, զորս օգտակար համարիք բարոյական կրթութեան և ձեռնատու արուեստին գիտութեան։

Ողջոյն Ձեզ, բարերար Մեկենասք, որ քաջալերելով զգրասէր աշխատաւոր մշակն՝ ի լոյս հանէք զնորա վաստակն և ընծայէք ազգին, որով ճոխանան և հարստանան աղքատիկ մատենադարանք Հայոց։

Ողջոյն Ձեզ, նախանձաւորք Սուրբ Կրօնի, եկեղեցասէր, ժողովրդասէր բարեպաշտ Ոգիք, որ շինէք զեկեղեցիս և զդպրանոցս, հաստատելով և պահելով կրօնի և ուսման տաճարս, որով լուսաւորին որդիք եկեղեցւոյ և ժողովուրդն յորդորի յԱստուածպաշտութիւն, որ՝ քան զամենայն ինչ զօրաւոր է։

Ողջոյն Ձեզ, Ուսանող մանկունք և օրիորդք, եղբարք և քորք, որ ձեռն ի ձեռն տուեալ ի միասին երթայք և գայք ի կրթութեան տաճարն. բարեբաստիկ և երջանիկ էք, եթէ հաւասար կրթութեամբ պատահեալ միմեանց ձեռն տայք յաւուր պստկադրութեան Ձերոյ ի սուրբ ամուսնութիւն։

Ողջոյն Ձեզ, Մայրաքաղաքացիք և գաւառական քաղաքացիք, որ պարապիք ի ձեռակերտ արուեստս և ի շահավաճառութիւնս, որ աշխատիք յառաջ վարել զգործս Ձեր իմաստուն տնտեսութեամբ և ճարտարագիտութեամբ, միշտ մրցելով և զարգանալով ըստ պահանջման ժամանակին։